ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/29

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «Արֆարմացիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 01.03.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Արֆարմացիա» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Արֆարմացիա» ՓԲԸ-ն 01.03.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՄՍՎԲԳԿ ԷԱՃԱՊՁԲ 19/4 ծածկագրով «Մաշկաբանության և Սեռավարակաբանության բժշկագիտական կենտրոն ՓԲԸ»-ի կարիքների համար դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019թ. փերվարի 6-ի N 4 որոշմամբ ներկայացվել է հրավեր (այսուհետ՝ Հրավեր):

Հրավերի 1.1 կետով սահմանված գնման առարկայի թիվ 1-ին, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 26-րդ չափաբաժիններում ընդգրկված ապրանքների գնման աճուրդի մասնակցության համար հայտ է ներկայացրել նաև «Արֆարմացիա» ՓԲԸ-ն:

19.02.2019թ. ժամը 18:46-ին էլետրոնային համակարգի միջոցով ստացվել է ծանուցում հակադարձ աճուրդի ավարտի վերաբերյալ:

Գտնում ենք, որ ՄՍՎԲԳԿ ԷԱՃԱՊՁԲ 19/4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 26-րդ չափաբաժիններով որակավորման փուլ անցնելու որոշումները, անհիմն են հետևյալ հիմնավորմամբ.

1. Համաձայն Հրավերի 7.2 կետի Էլեկտրոնային աճուրդը սկսվում է 18.02.2019թ. 14:00-ին:

2. ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ. Բրուտյանի՝ պետական կառավարման մարմիններին ուղղված գրության համաձայն 11.02.2019թ. ժամը 09:00 մինչև 19.02.2019թ. ժամը 18:00 ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի ծրագրային ապահովման մեջ ի հայտ են եկել խնդիրներ,որոնց հետևանքով առաջացել է ֆորս-մաժորային իրավիճակ և հնարավոր չի եղել ապահովել սահմանված կարգավորումներին համապատասխան ընթացակարգերի անցկացումը, որի հիման վրա 19.02.2019թ. դրությամբ էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով կազմակերպված և չավարտված գնման ընթացակարգերը, որոնց հայտերի վերջնաժամկետ է սահմանված եղել վերոնշյալ ժամանակահատվածը և որոնց շրջանակներում պետք է կայանային հակադարձ աճուրդները՝ հայտարարել չեղյալ:

3. Տվյալ դեպքում էլեկտրոնային համակարգի տեխնիկական խնդիրների հետևանքով Էլեկտրոնային աճուրդի հակադարձ աճուրդները 18.02.2019թ. ժամը 14:30-ից դարձել է անհնարին, որի հետևանքով «Արֆարմացիա» ՓԲԸ-ն զրկվել է ՄՍՎԲԳԿ ԷԱՃԱՊՁԲ 19/4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 26-րդ չափաբաժիններով հակադարձ աճուրդներին մասնակցելու հնարավորությունից:

Հիմք ընդունելով վերոգրյալ փաստական և իրավական հիմնավորումները և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով խնդրում եմ պարտավորեցնել ՄՍՎԲԳԿ ԷԱՃԱՊՁԲ 19/4 ծածկագրով «Մաշկաբանության և Սեռավարակաբանության բժշկագիտական կենտրոն ՓԲԸ»-ի կարիքների համար դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովին չկայացած ճանաչել ՄՍՎԲԳԿ ԷԱՃԱՊՁԲ 19/4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգը 1-ին, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 26-րդ չափաբաժիններով:»:

«Արֆարմացիա» ՓԲԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՓԲԸ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>«Մաշկաբանության և սեռավարակաբանության բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Մաշկաբանության և սեռավարակաբանության բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 13.03.2019թ. գրությամբ Բողոքներ քննող անձին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««Մաշկաբանության և սեռավարակաբանության բժշկագիտական կենտրոն ՓԲԸ»-ի կարիքների համար դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՄՍՎԲԳԿ ԷԱՃԱՊՁԲ 19/4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

E-auction համակարգի միջոցով 18.02.2019թ. ժամը 14:00-ին սկսվել է հակադարձ աճուրդը, որը ավարտվել է 18.02.2019թ. ժամը 16:30-ին:

ՄՍՎԲԳԿ ԷԱՃԱՊՁԲ 19/4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ և 26-րդ չափաբաժինների մասով գնային առաջարկ է ներկայացրել «Արֆարմացիա» ՓԲԸ-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությանն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում գնային առաջարկ է ներկայացրել 1-ին, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ և 26-րդ չափաբաժինների մասով, սակայն ոչ մի չափաբաժնի մասով հակադարձ աճուրդի չի մասնակցել: Արդյունքում 17-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ինչ վերաբերում է «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից բողոքով մեջբերած ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ. Բրուտյանի՝ պետական կառավարման մարմիններին ուղղված գրությանն, ապա հայտնում ենք, որ տեղյակ ենք վերջին

ամիսներին E-auction համակարգի հաճախակի խախտումների մասին, սակայն չէինք կարող հավաստի հայտնել, որ վերոնշված խնդիրները կարող էին խոչընդոտել «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից տվյալ մրցույթի մասնակցության իրավունքի իրացմանը, քանի որ Ընկերության կողմից ոչ մի չափաբաժնի մասով հակադարձ աճուրդի մասնակցության փորձ չի արվել:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «Մաշկաբանության և սեռավարակաբանության բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ Արթուր Պարանյանը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/29 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 01.03.2019թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՄՍՎԲԳԿ ԷԱՃԱՊՁԲ 19/4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը, ՄՍՎԲԳԿ ԷԱՃԱՊՁԲ 19/4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 28.02.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը.

«Մաշկաբանության և սեռավարակաբանության բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՄՍՎԲԳԿ ԷԱՃԱՊՁԲ 19/4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արֆարմացիա» ՓԲԸ-ն:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով սահմանվել է՝

- հրապարակման ժամանակ 2019-02-07 ժամը 11:23:34,
- հայտերի ընդունման վերջնաժամկետ 2019-02-14 ժամը 14:00:00,
- հակադարձ աճուրդ 2019-02-18 ժամը 14:00:00:

Աճուրդին մասնակցության հայտեր են ներկայացրել թվով 7 մասնակից՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն, «Լեյկո» ՍՊԸ-ն, «Դեզսերվիս» ՍՊԸ-ն, «Կոտայք» ՍՊԸ-ն, «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն, «Լիկվոր» ՓԲԸ-ն:

Հանձնաժողովը 28.02.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 13-րդ կետով որոշել է Աճուրդի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ ճանաչել.

- 17-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով՝ «Արֆարմացիա» ՓԲԸ-ին,

- 3-րդ, 8-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 20-րդ, 21-րդ չափաբաժինների մասով՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին,
- 12-րդ, 23-րդ, 25-րդ չափաբաժինների մասով՝ «Լեյկո» ՍՊԸ-ին,
- 6-րդ չափաբաժնի մասով՝ «Դեզսերվիս» ՍՊԸ-ն,
- 10-րդ, 22-րդ չափաբաժինների մասով՝ «Կոտայք» ՍՊԸ-ին,
- 26-րդ չափաբաժնի մասով՝ Եվրոֆարմ» ՍՊԸ-ին,
- 1-ին չափաբաժնի մասով՝ «Լիկվոր» ՓԲԸ-ին:

«Արֆարմացիա» ՓԲԸ-ն 01.03.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ էլեկտրոնային համակարգի միջոցով 19.02.2019թ. ժամը 18:46-ին ստացել է ծանուցում ՄՍՎԲԳԿ ԷԱՃԱՊՁԲ 19/4 ծածկագրով հակադարձ աճուրդի ավարտի վերաբերյալ և քանի որ 11.02.2019թ.-19.02.2019թ. ընկած ժամանակահատվածում E-auction համակարգում ի հայտ են եկել խնդիրներ, գտնում է, որ տվյալ Աճուրդով որակավորման փուլ անցնելու որոշումն անհիմն է:

Ղեկավարվելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 15-րդ կետով՝ Բողոքներ քննող անձը 18.03.2019թ. գրությամբ դիմել է էլեկտրենային աճուրդի E-auction համակարգը սպասարկող «Ավռոմիկ» ՍՊԸ-ին՝ խնդրելով «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 01.03.2019թ. ներկայացված բողոքի քննության նպատակով իրականացվող նիստերին ապահովել էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձի մասնակցությունը:

Բողոքի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ «Ավռոմիկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 18.02.2019թ. համակարգ մուտք գործելու փորձ չի կատարվել և համակարգում 18.02.2019թ. որևէ ծրագրային խափանում չի եղել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 42-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը ամփոփվում (փակվում) է հետևյալ պայմաններից մեկի կամ դրանց համատեղ առկայության դեպքում.

1) հրավերում նշված կոնկրետ պահի.

2) սպառվել է աճուրդին մասնակցելու հրավերում նշված աճուրդի փուլերի քանակը.

3) նոր գներ այլևս չեն ներկայացվել: Այդ դեպքում աճուրդին մասնակցելու հրավերում պատվիրատուն նշում է վերջին առաջարկությունն ստանալուց մինչև էլեկտրոնային աճուրդի փակումն ընկած թույլատրելի ժամանակահատվածը:

• 2-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն, նույն օրենքով սահմանված կարգով, պայմանագիրը կնքում է էլեկտրոնային աճուրդի արդյունքների հիման վրա՝ ընտրված մասնակցի հետ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Մաշկաբանության և սեռավարակաբանության բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՄՍՎԲԳԿ ԷԱՃԱՊՁԲ 19/4 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

- Աճուրդին մասնակցության հայտեր են ներկայացրել թվով 7 մասնակից՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն, «Լեյկո» ՍՊԸ-ն, «Դեզսերվիս» ՍՊԸ-ն, «Կոտայք» ՍՊԸ-ն, «Եվրոֆարմ» ՍՊԸ-ն, «Լիկվոր» ՓԲԸ-ն:

- ՄՍՎԲԳԿ ԷԱՃԱՊՁԲ 19/4 ծածկագրով հակադարձ աճուրդի ավարտը եղել է 18.02.2019թ. ժամը 16:30:00-ին:

- էլեկտրենային աճուրդի E-auction համակարգը սպասարկող «Ավռոմիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված եզրակացության համաձայն՝

1. «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 18.02.2019թ. համակարգ մուտք գործելու փորձ չի կատարվել:

2. E-auction համակարգում 18.02.2019թ. որևէ ծրագրային խափանում չի եղել:

Այսպիսով, հաշվի առնելով, որ Ընկերության կողմից չներկայացվեց որևէ ապացույց այն մասին, որ 18.02.2019թ. հակադարձ աճուրդի ընթացքում Էլեկտրոնային աճուրդի համակարգն աշխատել է խափանումներով և հնարավոր չի եղել մասնակցել Աճուրդին, ուստի Բողոքներ քննող անձը գնտում է, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 01.03.2019թ. բողոքով ներկայացված փաստարկներն անհիմն են:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 01.03.2019թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ